ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2026թ. թիվ 307-Ա

Հ.ՎԱՆՅԱՆԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Վանյանի 11.05.2026թ. թիվ 40 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հրանուշ Վանյանին թույլատրել մասնակցել 2026 թվականի մայիսի 12-ից 14-ը ներառյալ Երևան քաղաքում «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ), Հայաստանում Էստոնիայի միջազգային համագործակցության կենտրոնի (ESTDEV), Էստոնիայի կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի կողմից համատեղ կազմակերպվող «Դպրոցական առաջնորդների կրթական առաջնորդության կարողությունների բարձրացումը Հայաստանում» ծրագրին:

2. Հ.Վանյանի բացակայության ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար Ազնիվ Շիմալյանին:

3. Հ.Վանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի մայիսի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

X

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 12
ք.Վանաձոր